

**ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, 8-րդ հոդվածի 7-րդ մասով, 14-րդ հոդվածով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի վարչական տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար 2017 թվականի աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 3 000 դրամ, ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 դրամ:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարը սահմանվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1) առևտրի և բնակչության կենցաղային սպասարկման ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝

ա. մինչև 50 քառ.մետր մակերես ունեցող շինություններ՝ հինգ հարյուր դրամ,

բ. 50 քառ.մետրից ավել մակերես ունեցող շինությունների մասով՝ հինգ հարյուր դրամ գումարած 50 քառ.մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ևս երեսուն դրամ,

2) հանրային սննդի ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քառ.մետրը հիսուն դրամ,

3) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառ.մետրը երեսուն դրամ,

4) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քառ.մետրը ութ դրամ,

5) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառ.մետրը չորս դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 600 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար՝

1) աղբահանության վճարից 100%-ով ազատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների անդամներին:

(փոփոխված՝ համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 3-Ն որոշմամբ)